

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք. Երևան

 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն՝ ի դեմս նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա) մի կողմից և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունն՝ ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բեյլակի՝ այսուհետ միասին «Կողմեր»,

Կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը.

Շահագրգռված լինելով օժանդակելու պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, օգտագործմանը և Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի իրականացմանը.

Անհրաժեշտ համարելով միավորել Կողմերի հնարավորությունները.

Հիմք ընդունելով փոխադարձ պայմանավորվածությունները.

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են համագործակցել ՀՀ օրենսդրության շրջանակներում և, միավորելով հնարավորությունները, համատեղ աշխատանքներ իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Կուրիս գյուղի «Սբ Սարգիս եկեղեցի» /17-րդ դ./ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի՝ ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաք տեղափոխման, պահպանման և վերականգնման նպատակով:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՀՀ Սյունիքի մարզի Կուրիս գյուղի «Սբ Սարգիս եկեղեցի» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաք տեղափոխման, պահպանման և վերականգնման ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝

- կտրամադրի պետական միջոցներով իրականացված հուշարձանի գիտանախագծային փաստաթղթերը,
- սահմանված կարգով կքննարկի հուշարձանի գիտանախագծային փաստաթղթերը նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդում և կտրամադրի եզրակացություն,
- կհամաձայնեցնի ներկայացված աշխատանքային նախագծերը,
- կտրամադրի հուշարձանի տեղափոխման և վերականգնողական աշխատանքների իրականացման համար թույլտվություն,
- աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական ու իրավական խորհրդատվություն և աջակցություն:

2.2 «Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն՝

- իր միջոցներով կիրականացնի հուշարձանի տեղափոխման և նոր վայրում վերականգնման աշխատանքները՝ նախապես դրանք համաձայնեցնելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ,
- նախարարությանը կտրամադրի հեղինակային, տեխնիկական հսկողությունների և կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերը՝ նախատեսվող աշխատանքների թույլտվություն ստանալու նպատակով,
- կցուցաբերի աջակցություն նաև այլ հարցերում՝ իր իրավասությունների շրջանակներում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Կողմերը պայմանավորվում են պատշաճ կերպով կատարել Հուշագրով ամրագրված պարտավորությունները, ինչպես նաև լուսաբանել լրատվական միջոցներով և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:

3.2 Սույն Հուշագրով չկարգավորվող բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր. դրանք համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ դրանցից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.4 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ
ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ
ՏՆՕՐԵՆ՝



ԱԼՏՈՒՆԻ ԲՈՂԱՐՅԱՆ
ստորագրություն

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԵԼՅԱՆ

ստորագրություն

